

սպասեց նոր տանիք մը ունենալու համար, «վասն զի, կ'ըսէ Եահնա ժամանակագիրը, շատ ընդարձակ էր»: Բայց և այնպէս, այս դժուարին կացութիւնը ո՛ր եւ է խոչընդոտ չը բերաւ ա՛յն ուխտաւորութիւններուն որ ընդհակառակը շատցած էին այն հուրի եւ սուրի դարերու մէջ: Քրիստոնէութեան թշնամիները, պատմիչներուն ըսածին նայելով՝ շահագործեցին ուխտաւորական այս շարժումները և զրգռեցին Հաքէմ խալիֆային երեւակայական կասկածոտութիւնը, և սուլթանին միտքը նախապաշարեցին ըսելով թէ «եթէ ինքը չփութար կործանելու քրիստոնէից վեհագոյն տաճարը, անոնք չպիտի յապաղէին յարձակելու իր իշխանութեան վրայ և կապտելու զայն իր բոլոր պատիւներէն»:

Կետրինոս աւելի ճշմարտանման է սնոտի պատճառներու վերազրելով քրիստոնէից դէմ ուղղուած հալածանքը իշխանի մը՝ որուն անգութ արարքները առասպելի ձև ստացած են արաբ հեղինակներու մօտ: Հաքէմ սկսաւ իր հալածանքներու շարքը 1008ին հրատարակած այն հրամանովը որ կ'արգիլէր Մաղկազարդի թափօրը Երուսաղէմի և իր բոլոր խալիֆայութեան մէջ: Անոր բռնապետական գործերուն լրումը եղաւ երբ հրամայեց քանդել Ս. Կերեզմանը: Այս յանդգնութեան պատրուակը եղաւ, ըստ իսլամ պատմագիր Մուճիր էտ-տինի որ կը ջանայ արգարացնել, «Սուլթանին տրուած տեղեկագիր մը ի մասին այն սովորութեան զոր ունէին քրիստոնեայք Չատիկի օրը խարէութեամբ լոյս հանելով, այնպէս որ պարզամիտները կ'երեւակայեն թէ երկինքէն լոյս կ'իջնէր», բայց խալիֆան այնքան նախանձաւոր մէկը չէր որ վիրաւորուէր այդպիսի արարողութենէ մը: Ուստի այս վերջին տեղեկութիւնը վստահելի չէր կրնար ըլլալ: Ինչ որ ալ ըլլայ, Հաքէմը՝ Եգիպտոսի Ֆաթիմեան երրորդ խալիֆան՝ Փրկչին Գերեզմանը քանդելու խորհուրդը յղացաւ, զրեց իր փոխանորդին Պարուքի որ Ռեմէլ կը գտնուէր նոյն օրերը, քանդել Ս. Յարութեան տաճարը, մինչև անգամ անհետացնել հեաքերը, հիմնայատակ կործանելով զայն: Պարուք զրկեց իր մարդերը որ եկան յարձակեցան եկեղեցիին եւ յարակից շէնքերուն վրայ և ամբողջութեամբ կործանեցին, բացի անոնցմէ՝ որոնց քանդումը դժուար էր: Կործանեցին Գողգոթան և Ս. Կոստանդինոսը իրենց ըովանդակութիւններով և նոյն իսկ նուիրական հիմերը անհետացուցին: Իպն Ապի Տահէրը՝ յարձակող-